ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Գրիգորյան Արեն[1]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Ղարաբաղ, հակամարտություն, աշխարհաքաղաքականություն, էթնոքաղաքականություն, Կովկաս, պատմություն*

Հետխորհրդային տարածաշրջանում էթնոքաղաքական հակամարտությունների խնդիրը համարվում է ժամանակակիցկոնֆլիկտաբանության առավել արդիական խնդիրներից մեկը: Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան, Հարավային Օսեթիան, Մերձդնեսթրը համարվում են մեզ հայտնի էթնոքաղաքական հակամարտության գոտիների այն ոչ սպառիչ ցանկը, որոնք կարիք ունեն ոչ միայն խաղաղ ճանապարհով անհապաղ լուծման, այլև մանրակրկիտ ուսումնասիրման: Մի շարք օբյեկտիվ ցուցանիշներով, այս հակամարտություններն ունեն գրեթե միանման ծագման բնույթ և զարգացման դինամիկա, որոնք տրամաբանորեն ցույց են տալիս նաև հակամարտությունների լուծման համապատասխան քաղաքական-իրավական մեխանիզմները:

Այսպիսի հակամարտությունների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Ղարաբաղյան հակամարտությունը, որը սկիզբ առավ 20-րդ դարի 1980-ական թվականների վերջին, և

[1] Ռեզանի պետական համալսարանի ասպիրանտ, էլ. Փոստ՝ arengrigoryan.1990@yahoo.com

որոշակիորեն ազդեց ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի վրա, քանի որ դարձավ Խորհրդային Միության տարածքում սկիզբ առած առաջին և ամենամեծ միջժողովրդական չլուծված հակամարտությունը՝ ձեռք բերելով միջազգային մեծ արձագանք: Ղարաբաղյան հակամարտության լուծման քաղաքական-իրավական բարդությունները պայմանավորված են այս տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածությամբ, տնտեսական դժվարություններով, հակամարտող կողմերի անհանդուրժողականությամբ, ինչպես նաև միջնորդների միջև գոյություն ունեցող հակասություններով, որոնց ժամանակ առ ժամանակ մեղադրում են հայամետ կամ ադրբեջանամետ դիրքորոշման համար:

Խնդիրն առավել մեծ հետաքրքրություն է առաջացնում, քանի որ ղարաբաղյան հակամարտությունն ունի մի շարքառանձնահատկություններ, որով դուրս է մղվում հետխորհրդային տարածաշրջանում նմանատիպ միջժողովրդական բախումների շարքից: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, կարելի է ասել, դարձել է առավել հին՝ հայ-ադրբեջանական հակամարտության մասնիկ, որի ակունքները հասնում են ընդհուպ հայ-թուրքական բարդագույն հարաբերություններ, որն արդեն ունի բազմադարյա պատմություն, և բազմիցս աչքի է ընկել իր փոխադարձ ատելությամբ և արյունահեղությամբ: Շատ դեպքերում դա կապված է այն հանգամանքի հետ, որ Հարավային Կովկասն ու Հայկական լեռնաշխարհը դարեր շարունակ համարվում էին այնպիսի հզորագույն պետությունների աշխարհաքաղաքական շահերի բախման թատերաբեմ, ինչպիսիք էին Հռոմեական կայսրությունը, Պարթևստանը, Բյուզանդիան, Արաբական խալիֆայությունը, Իրանը, Օսմանյան կայսրությունը, Ռուսական կայսրությունը և այլն:

Կախված մի շարք հանգամանքներից, ղարաբաղյան հակամարտությունը հայերի և ադրբեջանցիների համար կարող է հանդես գալ թե որպես համեմատաբար նոր իրականություն, և թե որպես հին դիմակայություն միմյանց հանդեպ, իսկ այս հանգամանքը ոչ միայն չի խթանում հակամարտության խաղաղ լուծման մեխանիզմների զարգացմանը, այլև՝ էապես բարդացնում է խախաղ կարգավորման գործընթացը:

Դեռևս մթա 7-րդ դարի վերջից մինչև 6-րդ դարի սկիզբը,Կովկասը, այդ թվում Ղարաբաղի լեռնային և դաշտային շրջանները դարձել էին քաղաքական և էթնիկական (ժողովրդագրական) լուրջ հակասությունների և բախումների գոտի, որտեղ հիմնականում կենտրոնանում և վերախմբավորվում էին ժամանակի հզորագույն պետականության՝ Մեդիայի կողմ կամ դեմ հանդես եկող ուժերը: Այս բախումներում ներգրավված էին հայերը, սկյութերը, խուռիները և Փոքր Ասիայի այլ ազգություններ[2]:

Մթա 2-րդ դարից Արտաշեսյան արքայատոհմի, հետագայում նաև Արշակունիների կառավարման ժամանակաշրջանից Լեռնային Ղարաբաղը, որպես պատմական Արցախ նահանգի մաս, մտնում է Մեծ Հայքի կազմի մեջ: Մեծ Հայքի անկումից հետո Արցախն ամբողջությամբ անցնում է Պարսկաստանի հպատակության տակ գտնվող կովկասյան Ալբանիայի ենթակայության ներքո:

9-11-րդ դարերում Լեռնային Ղարաբաղը մտնում է Բագրատունյաց հայկական թագավորության կազմի մեջ, որպես

[2]История Древнего мира. Древний Восток. Египет, Шумер, Вавилон, Западная Азия /А.Н.Бадак, И.Е.Войнич, Н.М.Волчек и др. - Минск, 1998. - С.669-670.

Խաչենի իշխանություն: 13-րդ դարից այստեղ կառավարում են Հասան-Ջալալյանների իշխանական տունը: Խաչենի իշխանական տան տոհմի ակունքները ձգվում են մինչև Հայկ Նահապետը և նրա սերունդները: Ըստ Խորենացու և Կաղանկատվացու՝ Արցախի ու Գարդմանքի իշխանատների հիմնադիրն է եղել Առանը, որդի Սիսակի «ի տոհմէն Հայկայ»[3]:

Հասան-Ջալալյանների տոհմի ծագումնաբանության վերաբերյալ բավականին աղավաղված մեկնաբանություններ էին հնչում հատկապես ադրբեջանցի պատմաբանների և տեսաբանների կողմից: Մասնավորապես, ադրբեջանցի ժամանակակից պրոֆեսոր Բունիաթովն իր «հին Ադրբեջանի պատմությանը» վերաբերվող գիտական հոդվածներում առաջ է քաշում այն տեսությունը, ըստ որի, Հասան Ջալալյանները կամ Բեգլարյան իշխանները ոչ թե հայեր էին, այլ հայկականացված ալբանացիներ (աղվաններ): Իսկ այդ նույն ալբանացիներին նա համարում էր ադրբեջանցի ժողովրդի նախահայրեր, որոնց եկեղեցին, մշակույթը, գրականությունը, հուշարձանները հայերը յուրացրել են, ումշտապես ճնշել են բուն ալբանացիներին[4]: Այս տեսությունն իհարկե ոչ միայն հայ, այլև այլազգի գիտնականների կողմից ճանաչվեց որպես պատմության աղավաղում:

16-17-րդ դարերում Խաչենի իշխանությունում ձևավորվում են հինգ հայկական իշխանություններ (մելիքություններ) (Խաչեն, Դիզակ, Վարանդա, Ջրաբերդ և Գյուլիստան), որոնք ստացել են պատմական «Խամսայի մելիքություններ» անվանումը:

Այս նույն ժամանակամիջոցում Դաշտային Ղարաբաղում ձևավորվում է Ղարաբաղի խանությունը, որի առաջին խան

[3]Ուլուբաբյան, Բագրատ. "Խաչենիիշխանությունը X-XVI դարերում":Եր., ՀայաստանիԳիտություններիԱզգայինԱկադեմիա, 1975, էջեր 52-53.
[4]Том де Ваал. Глава 10. Урекаванк. Непредсказуемое прошлое (рус.), Русская служба Би-би-си (3 июля 2005 г.)..

Փանահ-Ալին իր իշխանությանը ենթարկեց մելիքություններին, և հաստատվեց Շուշիի ամրոցում:

1813 թվականին ռուս-պարսկական պատերազմներին վերջ դնող Գյուլիստանի հայտնի պայմանագրով Ղարաբաղի խանությունն անցավ Ռուսաստանի տիրապետության ներքո: Լեռնային Ղարաբաղը սկզբնական շրջանում համարվում էր Կովկասյան կոմիտեին[5] առընթեր Ղարաբաղի նահանգի մաս: Հետագայում դարձավ Ռուսական կայսրության Ելիզավետապոլ նահանգի շրջաններից մեկը: Հատկանշական է, որ Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելը չկանխեց Լեռնային Ղարաբաղում մահմեդականների կողմից հայկական տիրույթների նկատմամբ նվաճողական նկրտումները: Օրինակ, մինչև Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին, խաներն օժտված չէին մելիքների հողերի նկատմամբ բացառիկ իրավունքներով: Սակայն, ինչպես վկայում է Պարսկաստանում Ռուսական կայսրության դեսպան Ալ. Գրիբոյեդովը՝ վերջին խաներից Մեթխի-Կուլին, որն անցել էր ռուսական ծառայության, այնուամենայնիվ կարողացավ որոշակի հողատարածքներ փոխանցել իր հավատակից մերձավորներին՝ հետագայում դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորությամբ:

1822 թվականին Մեթխի-Կուլիի Պարսկաստան փախուստից հետո «նորաթուխ սեփականատերերի» հողի օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավունքները շարունակեցին պահպանվել, որի արդյունքում էլ էթնիկ հայերը պետք է

[5] Հանրայինիշխանությանայսմարմինըստեղծվելէ 1833 թվականին«Անդրկովկասայներկրամասիկառուցվածքիկոմիտե» անվամբ, ննպատակաուղղվածէրԿովկասումհամառուսականկառավարմանհամա կարգիներդրմամբևիրականացնումէրքաղաքացիականվարչարարության գործառույթներ:

համակերպվեին այն մտքի հետ, որ այժմ բնակվում են մահմեդականներին պատկանող հողատարածքներում: Այստեղ խոսքը գնում է այն հայերի մասին, որոնք 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրից հետո Պարսկաստանից վերադարձան Ղարաբաղի իրենց հայրենի հողը, որտեղից բռնի կերպով տեղահանվել էին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ:

1918 թվականից Դաշտային Ղարաբաղը մտնում է Ադրբեջանի կազմի մեջ, իսկ Լեռնային Ղարաբաղը դառնում թունդ վիճաբանությունների, իսկ հետագայում նաև արյունալի բախումների թատերաբեմ՝ հայերի և ադրբեջանցիների միջև: Հենց 1918 թվականը դարձավ ղարաբաղյան հակամարտության տարեգրության հաշվարկման սկիզբը: Այս ժամանակաշրջանում կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական լուրջ զարգացումների ֆոնի ներքո արյունալի մարտեր սկսվեցին իր անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության և նոր կազմավորված Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետության միջև, որն այս տարածաշրջանում Թուրքիայի նվաճողական ծրագրերն իրականացնելու համար բավականին մեծ պահանջներ առաջադրեց Հարավային Կովկասի տարածքի մեծ մասի նկատմամբ, և դա առաջին հերթին արտահայտվեց պատմականորեն հայկական համարվող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Կարելի է փաստել, որ Ռուսական կայսրության անկումից հետո Կովկասում էթնոքաղաքական մթնոլորտն առավել լարվեց: Օգտվելով դրանից՝ թուրքական զորքերը, խախտելով 1917 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված Երզնկայի զինադադարը, 1918 թվականի փետրվարի 10-ին անցան հարձակման: Թուրքական զորքերի դեմ, սկզբում, փաստորեն կանգնած էր 20 հազար զինվոր ունեցող Հայկական կորպուսը՝ գեներալ ԹովմասՆազարբեկյանի

հրամանատարությամբ, որովհետև վրացական ուժերը և Անդրկովկասի մահմեդականների (մուսավաթական) «վայրենի դիվիզիան» տեղավորված էին ռազմաբեմից հեռու տարածքներում: Թուրքական հարձակման հենց սկզբին Կովկասյան բանակի հրամանատար Օդիշելիձեն հրամայեց նահանջել առանց թուրքերի ուժերին դիմադրելու: Այդ դավաճանությունը նպաստեց թուրքերի սրընթաց առաջխաղացմանը. նրանք գրավեցին Երզնկան, Կարինը, Սարիղամիշը:

1918 թվականի մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայկական զորամիավորումների կողմից խայտառակ պարտություն կրելու հետո թուրքական բանակը շրջանցելով Արարատյան դաշտը, ներխուժեցին Արևելյան Անդրկովկաս և արշավեցին դեպի Բաքու: Բաքվում հաստատված խորհրդային իշխանությունը՝ Բաքվի կոմունան, ուներ 10 հազարանոց զորք, որից շուրջ 7000-ը հայեր էին: Չնայած համառ դիմադրությանը, կոմունայի զորքերը չկարողացան պահել Բաքուն, և թուրքական ու մուսավաթական գերակշիռ ուժերը ներխուժեցին Բաքու ու կոտորեցին 30 հազար հայերի[6]:

Շուտով անկում է ապրում նաև Օսմանյան Թուրքիան: Մուսթավա Քեմալի ղեկավարած թուրքական կառավարությունը, որը բոլշևիկյան Մոսկվայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելով որոշակի աջակցություն էր ստանում նրանից, ոգևորված սկսում է զինված գործողություններ վարել հայ-վրացական զորքերի դեմ:Միաժամանակ, նորաստեղծ Ադրբեջանն իր հերթին է զինված պայքար մղում Հայաստանի դեմ՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի համար: Այդ պայքարում

[6] «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996թ.

Ադրբեջանը դիմեց բարբարոսական տարբեր միջոցների: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանական կառավարության վարած քաղաքականության մասին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շտաբի ղեկավարի 1920 թվականի ապրիլի 20-ի զեկույցում հաղորդվում էր. «*Մարտի կեսերին Ադրբեջանը, համաձայն վերջնագրի՝ ձեռնամուխ եղավ Ղարաբաղի զինաթափմանը, և կենտրոնացնելով ուժերը, հարձակումներ գործեց Զանգեզուրի և Ղարաբաղի ուղղությամբ…: Բաքվից Ջաբրայիլ ուղարկված թաթարները Շուշիում սպանել են շուրջ 8.000 հայ մարդու*»[7]:

Այս առումով հատկանշական է այն կարծիքը, ըստ որի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման գործում անփոխարինելի էր հենց բոլշևիկյան քաղաքականությունը, որով առաջնահերթ էր համարվում ոչ թե էթնոքաղաքական այսպիսի բարդ հակամարտության լուծումը, որքան պրոլետարական հեղափոխության «արտահանումը» հարևան երկրներ, մասնավորապես՝ Թուրքիա, Իրան և Մերձավոր Արևելք[8]:

Արդյունքում Հայաստանը հայտնվեց տնտեսապես շրջափակված օղակի ներսում, որի արդյունքում 1920-1921 թվականներին սովից և ցրտից մահանում է բնակչության 1/3-ը: Լեռնային Ղարաբաղում ծագած միջժողովրդական բախումները խլեցին ոչ միայն երկրամասի բնակչության մեծ մասի կյանքը, այլև մեծ վնաս հասցրին պատմամշակութային ժառանգությանը:

---

[7]Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. - Ереван, 1992. - С.427- 432.

[8]Кадымов Г.Г. Россия и урегулирование конфликтов в СНГ/ Внешняя политика современной России. Сборник статен. - М., ДА МИД России, 2000. С 41.

Բոլշևիկների համար անդրկովկասյան նորաստեղծ պետությունների խորհրդայնացումն ուներ քաղաքական հատուկ նշանակություն: Թուրքական զորքերի արշավանքները դեպի Հայաստան մեծ անհնազանդություն էր առաջացնում Ռուսաստանում, քանի որ բոլշևիկյան կառավարությունը մտավախություն ուներ, որ թուրքերը կներխուժեին նաև Ադրբեջան: Բացի այդ, Մոսկվային լարվածության մեջ էր պահում նաև այն փաստը, որ Անտանտի անդամ-պետությունները փորձում էին Թուրքիայի հետ հաստատել դիվանագիտական ջերմ հարաբերություններ: Իսկ դա կնշանակեր, որ Թուրքիան արևմտյան պետությունների ձեռքում փաստացի կդառնար կույր գործիք՝ Անդրկովկասումբոլշևիկների խորհրդայնացման քաղաքականության դեմ: Այս ծանր պայմաններում 1920 թվականի նոյեմբերի 27-ին Ստալինը հրամայեց դաժան պայքար սկսել Հայկական բուրժուական հանրապետության նկատմամբ:

Այս իրադարձությունների վերաբերյալ բավականին բնութագրական կերպով մեկնաբանել է թուրք հետազոտող Օ. Քոջամանին, ըստ որի «*Թուրքերն ու բոլշևիկները, չնայած Հայաստանի վերաբերյալ իրենց ունեցած հակասություններին, այնուամենայնիվ չկարողացան լրիվությամբ հրաժարվել միմյանց հանդեպ ունեցած «առանձնահատուկ հարաբերություններից»: Քանի դեռ Թուրքիանպատերազմում էր Անտանտի դեմ, Ռուսաստանը պետք է աջակցեր նրան ռազմական և այլ միջոցներով: Թուրքիան էլ այս ընթացքում խիստ կարիք ուներ Ռուսաստանի օգնությանը: Հիմա թուրք-սովետական հարաբերությունները ձեռք բերեցին զուտ գործնական բնույթ: Թուրքերը չէին ցանկանում հատել նախկինում Ռուսաստանին պատկանող հայկական տարածքների սահմանը, իսկ*

Ռուսաստանը չէր փորձում առաջանալ դեպի թուրքական Հայաստան: Հայկական անկախ պետությունը, դժբախտություն ունենալով հյուսիսում սահմանակցել բոլշևիկ, իսկ հարավում՝ թուրք ազգայնականների հետ՝ փաստացի բաժանվել էր երկու մասի[9]»:

1920 թվականի հուլիսի 8-ին Ստալինը Օրջոնեկիձեին ուղարկած հեռագրում հայտնում է. «*Իմ կարծիքը հետևյալն է, չի կարելի է անընդհատ տատանվել կողմերի միջև, այլ հարկավոր է որոշակիորեն աջակցել կողմերից մեկին: Այս դեպքում իհարկե Ադրբեջանին՝ Թուրքիայի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ, նա դեմ չէ[10]*»:

1920 թվականի դեկտեմբերի 2-ին բոլշևիկյան 11-րդ կարմիր բանակի և թուրքական բանակի ճնշման տակ Երևանում ստորագրվեց համաձայնագիր: Դրանով Հայաստանը հռչակվում էր խորհրդային սոցիալիստական հանրապետություն, իշխանությունը անցնում էր ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտեին: Նոր կառավարությունը համոզված էր նրանում, որ Ղարաբաղը, Նախիջևանը և մի շարք այլ տարածքներ, որտեղ մեծամասամբ ապրում էին հայեր, շուտով մտնելու է Հայաստանի կազմի մեջ, և դա այն պարագայում, երբ Ադրբեջանի ժամանակակից առաջնորդները համարում էին դա ճիշտ և արդար որոշում: Սակայն 1921 թվականի հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի տխրահռչակ որոշումն ընդունվեց առանց որևէ քննարկման և քվեարկության: Որոշման մեջ ասվում է հետևյալը. «*Ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ներքին*

[9]Коджаман О. Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период (кавказский роковой круг) /Пер. с англ. - М., 2004. - С.57-58.

[10]http://www.memo.ru/d/119094.html.

Ղարաբաղի տնտեսական կապերի, Ադրբեջանի հետ նրա մշտական կապի հանգամանքից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ կազմի ներքո, օժտելով նրան լայն մարզային ինքնավարություն՝ ինքնավար մարզի կազմի մեջ մտնող Շուշի վարչական կենտրոնով»: Սա այն դեպքում, երբ ընդհամենը մեկ օր առաջ, առանց որևէ ընթացակարգային խախտումների, նույն մարմինը հարցը լուծել էր հօգուտ Հայաստանի[11]: Սակայն Ադրբեջանի կառավարությանը բավականին դժվար էր լինելու իրեն ենթարկել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդին, որի մասին են վկայում Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղ գործուղված պաշտոնյաները, ըստ որոնց, Ղարաբաղի հայ գյուղացիները չեն ցանկանում հաց տալ Ադրբեջանին, վճռականորեն հրաժարվում են նաև մյուս հարկերը տալուց, բոյկոտում են Բաքվից եկած կարգադրություններն ու որոշումները[12]:

Լեռնային Ղարաբաղում էթնոքաղաքական հակամարտությունը կտրուկ կերպով սրվում է 1988 թվականին, երբ ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորները միջնորդությամբ դիմեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս գալու և Խորհրդային Հայաստանի կազմի մեջ մտնելու խնդրանքով: 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի ընթացքում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակագիրը:

Հայերի և ադրբեջանցիների միջև առկա դիմակայությունը վերջապես վերաճեց զինված հակամարտության, որի ընթացքում զոհվեցին հազարավոր մարդիկ, իսկ տասնյակ հազարավոր

[11]http://www.karabagh.am/GlavTem/14Spravka.htm.
[12] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ 1917-2000 թթ., Գիրք Ա, էջ 262.

տեղաբնիկներ դարձան փախստական: Պատերազմի արդյունքում ԼՂՀ-ն իր վերահսկողության տակ առավ ոչ միայն նախկին ԼՂԻՄ տարածքը, այլև դրան հարակից մի շարք շրջաններ, որտեղ մեծամասամբ ադրբեջանցիներ էին բնակվում:

Լեռնային Ղարաբաղի էթնոքաղաքական հակամարտության նախադրյալներից մեկն է համարվում նաև տարածաշրջանի բնակչության վիճակագրությունն ու տեղաշարժը: Մասնավորապես, 19-րդ դարի առաջին կեսին իրականացված մարդահամարի տվյալներով Ղարաբաղի բնակչության 1/3-րդը կազմում էին էթնիկ հայերը, իսկ 2/3-րդը՝ ադրբեջանցիները[13]: Հայկական բնակչությունը կենտրոնացված էր Ղարաբաղի 21 շրջաններից 8-ում, իսկ բուն Լեռնային Ղարաբաղում կազմում էին բացարձակ մեծամասնություն (մոտ 90 %):

Համաձայն 1923 թվականի մարդահամարի տվյալների, նորաստեղծ ԼՂԻՄ-ում հայերը կազմում էին բնակչության 94 %-ը: Մնացած 6 %-ը ներկայացված էին որպես ադրբեջանցի, քուրդ, ռուս և հույն: Շուշի քաղաքի բնակչությունը կազմում էր 1921 թ.-ին 9223, 1923 թ.-ին՝ 6976, 1925 թ.-ին՝ 5000 մարդ[14]: «*1920-ական թվականներին, փաստորեն կովկասյան չափանիշներով երբեմնի մարդաշատ, և Անդրկովկասի խոշորագույն քաղաքն ըստ էության վերածվեց կեղտոտ և աղքատ գյուղի, որի բնակչությունը կրճատվեց մինչև 3000*»[15]:

---

[13] Հաստատված է այն փաստը, որ մարդահամարն իրականացվում էր որպես կանոն՝ ձմռանը, երբ քոչվոր ադրբեջանցիները լեռնային շրջաններից տեղափոխվում էին դաշտային տարածք: Սակայն տեսաբանների կողմից միանշանակորեն չի կիսվում այն տեսակետը, ըստ որի քոչվոր ժողովրդը լիարժեք իրավունք ունի համարվել տեղի բնակչություն:

[14] «Խորհրդային Հայաստան» թերթ, 1925թ., №224, հոկտեմբերի 3.

[15]Мелик-Шахназаров З. Записки карабахского солдата. -М., 1995. - С.34.

1926 թվականի համամիութենական մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ-ի բնակչությունը կազմում էր 125,3 հազար մարդ, որից 111,7 հազարը (89,1%) հայեր էին, իսկ 12,6 հազարը (9%) թուրք-ադրբեջանցի, 596 (0.5%)՝ ռուս[16]: Իր հերթին սակայն, խորհրդային իշխանության տարիներին ադրբեջանցի բնակչության քանակը տարեց-տարի ավելանում էր, և 5%-ից բարձրացավ մինչև 23%:

Էթնոքաղաքական հակամարտության հաջորդ նախադրյալը համարվում էր տարիների և նույնիսկ հարյուրամյակների ընթացքում կուտակված ազգային անհանդուրժողականությունն ու էթնիկ թշնամանքը հակամարտող կողմերի միջև, որոնց մեղմացման գործում անզոր եղան թե ցարական, և թե դաստիարակիչ և քարոզչական մեխանիզմներով օժտված խորհրդային «ամենակարող» իշխանությունները: Միաժամանակ պետք է ընդունենք, որ էթնոքաղաքական հակամարտությունները դասվում են բարդագույն և դժվարությամբ կարգավորվող հակամարտությունների թվին, քանի որ այստեղ առկա են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ազգայնականությունը, ժողովուրդը, հայրենասիրությունը, որոնք ֆենոմենալ երևույթներ են, և չկա դրանց վերաբերյալ միասնական կարծիք:

Էթնոքաղաքական հակամարտության մյուս նախադրյալը, որը բխում է առաջին երկու նախադրյալներից, կանխորոշեց հայերի և ադրբեջանցիների միջև կատաղի զինված դիմակայությունը 20-րդ դարի սկզբին և վերջին:

Դրան զուգահեռ, կանխորոշվեց նաև կողմերի միջև առկա ատելության մթնոլորտի էլ ավելի սրացումը, որը հանգեցրեց հակամարտության հուզական-հոգեբանական

[16]Всесоюзная перепись населения Закавказской Социалистической Федеративной Республики 1926 года. Т. 14. - М., 1929. - С.53.

ծայրահեղականտրամադրվածությունների առաջացմանը: Դրանով էր բացատրված հատկապես ադրբեջանակ կողմի իրականացրած վայրագությունները խաղաղ հայ բնակչության նկատմամբ:

Այս ամենի համակցությունն իր հերթին որոշակիորեն ցույց է տալիս Ղարաբաղյան էթնոքաղաքական հակամարտության առանձնահատկությունը հետխորհրդային տարածքում առկա այլ հակամարտություններից, քանի որ,ինչպես նշվեց, ղարաբաղյան խնդիրն ունի պատմական, էթնիկական, մշակութային առավել խորը արմատներ ի տարբերություն այլ, առավել «երիտասարդ» հակամարտություններից:

ИСТОРИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ЭТНОПОЛИТИЧЕСКОГО КОНФЛИКТА НАГОРНОГО КАРАБАХА

(резюме)

Григорян Арен

В статье изучены этнополитические противоречия, имевшие место в Нагорном Карабахе с древних времен до распада Советского союза, выявлены последствия нелегальной политики большевицких властей по отношению к армянскому населению.

A HISTORICAL BACKGROUND OF ETHNO-POLITICAL CONFLICT OF NAGORNO-KARABAKH

(summary)

Grigoryan Aren

The article deals with the ethno-political conflicts, which took place in Nagorno-Karabakh since ancient times till the collapse of the Soviet Union, as well as the consequences of the illegal policy Bolshevik authorities towards the Armenian population.